

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության փորձագետ Թամարա Ստեփանի Մարգարյանի՝ 2023թ. մարտի 1-ից 2024թ. մարտի 1-ը իրականացված աշխատանքների վերաբերյալ

Ես՝ Թամարա Ստեփանի Մարգարյանս, 2023թ. մարտի 1-ից 2024թ. մարտի 1-ը ներառյալ, աշխատելով որպես ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության փորձագետ, կատարել եմ հետևյալ աշխատանքները.

- Քաղաքացիների ընդունելության, դիմումների ընդունման, ուսումնասիրության, փաստաթղթերի տրամադրման գործընթացի կազմակերպում, մասնավորապես՝ օտարերկրա քաղաքացիների դիմումների պատասխանների պատրաստում, քաղաքացիների՝ ԱՊՀ երկրների իրավասու մարմիններին հասցեագրված հարցումների ընթացքի ապահովում, ԱՊՀ երկրների իրավասու մարմիններից ստացված հանձնարարականների ուսումնասիրություն, քննարկում, կատարման համար համապատասխան ընթացքի ապահովում, ԱՊՀ երկրներ ուղարկվող պաշտոնական փաստաթղթերի թարգմանությունների ապահովում:
- «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի 1993 թվականի, «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» Հաագայի 1980 թվականի, «Ծնողական պարտականությունների և երեխայի պաշտպանությանն ուղղված միջոցների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաչման, իրականացման և համագործակցության մասին» Հաագայի 1996 թվականի, «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 2002 թվականի Քիշնևի կոնվենցիաների շրջանակներում օտարերկրյա պետությունների կենտրոնական և իրավասու այլ մարմինների փաստաթղթաշրջանառության ապահովում, կրկնօրինակ վկայականների և տեղեկանքների տրամադրում, գրությունների պատրաստում, այդ մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպում, թարգմանությունների ապահովում:

- Վերը նշված կոնվեցիաներին կից ուղեցույցների, ձեռնարկների, երեխաների որդեգրման ոլորտը կանոնակարգող միջազգային փորձի ուսումնասիրություն, տեղեկատվության հավաքագրում և ներկայացում:
- Քաղաքացիների հնչեցրած հարցերի, նրանց իրավունքների և պարտականությունների, օրենքով սահմանված դրույթների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում:

Հարգանքով՝



Թամարա Մարգարյան  
01.03.2024թ.